ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն **51**(1), 2017 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 551–58

ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵՋ

Ա. Ռ. ԱՎԱԳՅԱՆ *

ԵՊՀ սերվիսի ամբիոն, Հայաստան

Հասարակական կյանքի տարածքային ձևերի կազմակերպման մեջ առանցքային դեր է կատարում սպասարկման ոլորտը: Իր հերթին սպասարկման ոլորտի զարգացմանը խթանում են մարդու պահանջմունքների բավարարվածությունը:

***Keywords*:** motivation, needs, territorial organization, social life, regional system, remuneration.

Հասարակական կյանքի կազմակերպման ամենաարդյունավետ ձևը տարածքայինն է: Այն հնարավորություն է տալիս նպատակային ձևով օգտագործել տարածքի (ռեգիոնի) բնական և մարդկային ռեսուրսները, համալիրային ձևով լուծել ռեգիոնի տնտեսական սոցիալական և էկոլոգիական խնդիրները, պայմաններ ստեղծել կայուն մարդկային զարգացման համար:

Ռեգիոնալ համակարգերում բնական, մարդկային ռեսուրսների, հասարակական կյանքի բոլոր բաղադրիչները դիտվում են որպես մեկը մյուսի հետ փոխպայմանավորված տրամաբանական ամբողջություն, այնպիսին՝ որը հնարավորություն է տալիս հասարակական կյանքը:

Հասարակական կյանքի ռեգիոնալ համակարգի կազմակերպման համար ելակետային են համարվում մարդու (անհատի) պահանջմունքները և դրանց բավարարման անհրաժեշտությունը: Պահանջմունքների և կարիքների բավարարման կայուն համակարգի կառուցման համար անհրաժեշտ է բացահայտել ռեգիոնի բոլոր բաղադրիչների առաջացման և գործունեության դրդապատճառները:

Դրդապատճառն այն ամենն է, ինչը մարդուն մղում է աշխատելու, գործունեություն ծավալելու, ինչպես նաև պահանջմունքները, համոզմունքները, ցանկությունները բավարարելու:

Դրդապատճառի և պահանջմունքի միասնության գիտական մեխանիզմը բացահայտում է թե ինչու՞ և ի՞նչ պատճառով է առաջանում պահանջմունքը: Ինչպես կարելի է կազմակերպել պահանջմունքի բավարարման համակարգը, որի հիմքում դրդապատճառն է, իսկ վերնաշենքում պահանջմունքը: Վերնաշենքի կառուցման համար անհրաժեշտ է ստեղծել ամուր հիմք: Ուստի պահանջմունքի բովանդակությունը ըստ էությամբ հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ նրա դրդապատճառը, ծագումը, բովանդակությունը, դրսևորումները: Սերվիսագիտությունը պահանջմունքները և նրանց առաջացման դրդապատճառները

* E-mail: aavagyan@ysu.am

տեսնում է որպես դիալեկտիկական միասնություն, որի բոլոր բաղադրիչները փոխկապակցված են և փոխպայմանավորում են միմյանց:

Ինչպես Լ.Հ. Վալեսյանն է նշում "… գիտության զարգացումը ոչ այլ ինչ է, քան հիմնախնդիրների՝ որպես միասնական շղթայի, հաջորդական օղակների ճանաչում, մշտական շարժում, մի հիմնախնդրից մյուսը, ավելի պարզ հիմնախնդրից ավելի բարդը" [1]:

Հասարակական կյանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է իմանալ՝ ինչ է ուզում հասարակությունը և ինչպես ու ինչ ձևերով կարելի է հասնել դրանց բավարարմանը:

Ն.Ն. Կոլոսովսկին, Ն.Ն. Բարանսկին հասարակության նյութական կյանքի ստեղծման անհրաժեշտ և մշտական պայմանները համարում էին բնության կարողությունները և արտադրողական ուժերը [2, 3]: Մ.Մ. Գոլուբչիկի և Ս.Պ. Եվդոկիմովի [4], Վ.Ա. Անուչինի մոտ կարևորվում են էկոլոգիական գործոնները, Յու.Գ. Սաուշկինը, Դ. Հարվեյը առաջ են մղում սոցիալական գործոնը [5–8], մեր կարծիքով՝ հասարակական կյանքի տարածքային կազմակերպման մեջ կարևոր է հումանիստական՝ մարդու որակի գործոնը [9]:

Բնական կարողությունները և արտադրողական ուժերը հասարակական կյանքի կազմակերպման նախապայմաններն են, էկոլոգիական և սոցիալական խնդիրների լուծումը, նպատակը, հումանիստական խնդրի լուծման միջոցը:

Հումանիստական սկզբունքներով առաջնորդվող հասարակությունում հնարավոր է բացահայտել է արժեքավորել մարդու պահանջմունքները, գնահատել նրանց առաջացման դրդապատճառները:

Սակայն զուտ պահանջմունքը դրդապատճառ հանդիսանալ չի կարող: Ինչպես Վ. Վռումն է նշում որոշակի նպատակի հասնելու համար մարդու մոտիվացիայի (դրդապատճառի) միակ անհրաժեշտ պայմանը ակտիվ պահանջմունքի առկայությունը չէ, մարդը պետք է հույս ունենա, որ իր ընտրած վարքի կերպը իրականում կհանգեցնի բավարարման կամ ցանկալի ձեռք բերման [10, 11]:

Սպասելիքները, դրանց ստանալու հույսը մարդուն մղում են գործունեության: Ըստ սպասելիքների տեսության (մոտիվացիայի) դրդապատճառն ավելի արդյունավետ է, երբ մարդիկ հավատում են, որ իրենց ջանքերն անպայման հնարավորություն կտան հասնելու առաջադրված նպատակներին [12]: Կարևոր նշանակություն ունի թափած ջանքերի հատուցումը: Ըստ մոտիվացիայի գործընթացային տեսության "անձի գործունեության մեջ պահանջմունքի դերը, անձի վարքը պայմանավորում են նրա սպասելիքների առաջացրած նպատակին հասնելու համար գործադրած ջանքերի ստացմամբ" [5]:



Սպասելիքի և դրդապատճառների կապը [4]:

Հասարակական կյանքի տարածքային կազմակերպման մեջ պահանջմունքից և սպասելիքից բացի կարևոր նշանակություն ունեն հասարակական շահերը, հասարակության անդամների համոզմունքները, զգացմունքները, գործունեություն ծավալելու հնարավորությունները: "Մոտիվացիոն (դրդապատճառային) գործոններ

են աշխատանքային ինքնուրույնության առաջխաղացման հնարավորությունները, պատասխանատվությունը, աշխատանքի արդյունքների ճանաչումը և այլն” [12]:

Դրդապատճառի իրագործման համար կարևոր նշանակություն ունի հասարակության կողմից դրանց կատարման համար ստեղծված պայմանները: Ինչպես որ աշխատելու և գործունեություն ծավալելու հասարակական պայմաններն են այնպիսի աշխատանքից ստացված սպասելիքներն ու արդյունքներն են:

Կարևոր նշանակություն ունի խնդիրների լուծման ճանապարհների, ուղիների ընտրությունը, որը հասարակական երևույթ է, կապված է հասարակության ապրելու սկզբունքների, հայացքների, համոզմունքների ամբողջությունից, աշխարհայացքից՝ որն որոշում է հասարակության (նրա առանձին անդամների) գործելակերպը, վերաբերմունքն իրականության նկատմամբ:

Խնդիրների լուծման եղանակի ընտրությունը կապված է նաև հասարակության բարոյական սզկբունքների ու նորմերի հետ, որոնք իբրև մարդկանց վարքի և փոխհարաբերությունների կարգավորիչ որոշում են վերաբերմունքը շրջապատի նկատմամբ, ինչն էլ որոշում է դրդապատճառի ձևը:

Դրդապատճառը հասարակական (մարդկային) գիտակցության կատեգորիա է, որը կապված է բարոյական նորմաների կրթության և դաստիարակության հետ: Մի անհատի (հասարակության) կյանքի ապրելու իմաստը և ինքնահաստատումը հոգևոր և բարոյական արժեքների հաստատման մեջ է: Նրա մոտ վեհ գաղափարներն են, արժանապատիվ վարքը, ունեցածը շրջապատի հետ կիսելու, նեղը ընկածին հասնելու կարեկցելու մեջ է, մյուսի մոտ թալանելու, կուտակելու վարքն է: Նրա մոտ ամեն ինչը նյութական է, չկա հոգևորը, բարոյականը, կա զոմբիի հոգեբանությունը:

Որքան բարձր է հասարակության (անհատի) գիտակցության մակարդակը, այնքան բազմաթիվ են պահանջմունքները և նրանց դրդապատճառները: Մարդու մտավոր կարողությունների աճին զուգահեռ դրդապատճառները նյութական դաշտից տեղափոխվում են հոգեկան աշխարհ:

Ոչ նյութական դրդապատճառները կապված են առավել բարձր մակարդակի պահանջմունքների՝ սոցիալ-հոգեբանական և ստեղծագործական բավարարման հետ: Սոցիալ-հոգեբանական դրդապատճառները լինելով հասարակական երևույթ կապված են շրջապատի կողմից աշխատողի ճանաչման, հարգանքի, պատկանելության, ինչպես նաև ինքնահաստատման պահանջմունքի հետ:

Ինքնահաստատումը մարդու ձգտումն է, երազանքը գտնելու իր տեղը՝ տեսակի և հասարակության մեջ: Այն մարդուն մղում է ստեղծելու, արարելու, հասարակական հիեարխիկ մակարդակում ավելի վեր բարձրանալու: Այն նաև մարդու ներկան է և ապագան: Ապագան հեռու տեսնելու, այնտեղ իր տեղն ունենալու, “Ես”-ը հավերժացնելու գաղափարն է:

Ինքնահաստատումը նաև հասարակական, ազգային երևույթ է հասարակության և ազգի ինքնահաստատման, ինքնապաշտպանության դրդապատճառ: Այն իրագործվում է առաջին հերթին էթնիկական ինքնագիտակցության միջոցով: Էթնիկական ինքնագիտակցությունը անձի և խմբի ինքնությունն է “Ես”-ի անձնային և խմբային արժանապատվության և հպարտությունն է գոյատևելու, ապրելու դրդապատճառը:

Էթնոպաշտպանության բնազդն անվտանգության ապահովման դրդապատճառն է, իսկ անվտանգության ապահովման երաշխավորը հայրենիքն է, անհատի և հասարակության ապրելու, գոյատևելու հենքը: Հայրենիքը ստեղծածի պահպանության երաշխավորն է: Օտարության մեջ ստեղծածը մնայուն չէ, նա օտարինն է, իսկ ստեղծողը միտումնավոր ձևով ենթակա է մոռացության: Այն ստեղծածի, նյութականի ու հոգեկանի, հոգևորի, մտավորի պահապանն է:

Հասարակությունն իր իսկ պաշտպանության մաս կազմող անհատների ապրելն արդյունավետ դարձնելու դրդապատճառով, ընդհանուր գործին մոտենում է անհատական ձևով նպատակ ունենալով վերադարձնելու անհատի

ֆիզիկական կարողությունները, առողջությունը, թեթևացնելու հոգեբանական ծանրաբեռնվածությունը, պայմաններ ստեղծելու, ձեռք բերելու գիտելիքներ, հեղինակություն, հասնելու համընդհանուր ճանաչման, նկատելի դառնալ հասարակության մեջ:

Նպատակին հասնելու համար հասարակությունը ձգտում է իր մասը կազմող անհատների մեջ հաստատել միջանձնային լավ՝ մարդկային հարաբերություններ: Մարդկանց պետք է ոչ միայն ղեկավարել այլ նաև վստահել և հարգել: Անհրաժեշտ է հիշել, որ մարդը անհատ է և անհատական մոտեցումը հնարավորություն կտա յուրաքանչյուրին ըստ արժանավույն գնահատել, որը հնարավորություն կտա մարդկանց մոտ հավատ ներշնչել սեփական արժանիքների հանդեպ:

Հասարակական առողջ մթնոլորտում ստեղծվում է "խմբային ոգի": Այն հասարակության յուրաքանչյուր անդամի հնարավորություն է տալիս կատարել օգտակար գործողություններ, խմբի մյուս անդամների կողմից ստանալ արժանի գնահատական:

Այսպիսով, հասարակական ողջ կառուցվածքի բարելավումը, կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, կայուն մարդկային զարգացման ապահովումը, անհատի և ողջ հասարակության զարգացման առաջընթացի, կատարելիության հասնելու դրդապատճառն է:

Խմբակային ոգու "բարձրացումը" կարելի է իրագործել համատեղ աշխատելու, ստացված արդյունքներից համատեղ օգտվելու դրդապատճառներով:

Համատեղ աշխատելու դրդապատճառները կապված են դժվար խնդիրները միասին ընդհանուր ուժերով լուծելու հետ: Այստեղ ընդհանրության գաղափարն է: Ստացված արդյունքներից համատեղ օգտվելը օգնում է յուրաքանչյուրի զգալու ընդհանուրի մաս: Սակայն համատեղ օգտվելու գործելաձևի մեջ կա նաև տարբերակված մոտեցումը, յուրաքանչյուրին ըստ արժանավույն գնահատելու անհրաժեշտությունը, որի դրդապատճառը անհատական կարողությունների, աշխատանքում կատարած ուժերի գնահատումն է: Այս պայմաններում անհատը հնարավորություն է ունենում ամբողջությամբ դրսևորելու իր կարողությունները, ստեղծելու սեփական աշխատանքային գործունեություն, վարձատրության խրախուսման դաշտը, որը ապրելու աշխատելու գրավիչ օջախ է:

Ըստ Ջոն Շոուլի աշխատանքային գործունեության ընթացքում "անձնակազմի համար խիստ կարևոր են պարգևատրումները, սակայն բարձր արդյունավետության հասնելու համար կարևորը ոչ թե փողն է, այլ ճանաչումը, գնահատումը, երաշխավորված աշխատանքը" [13]:

Այսպիսով անհատի նյութական և հոգևոր-հոգեբանական պահանջունքի բավարարումը, առողջ աշխատանքային մթնոլորտը դառնում են հասարակական միջավայրի ներդաշնակման դրդապատճառ, որն իր հերթին հիմք է հանդիսանում հասարակական կյանքի տարածքային կայուն ձևերի ստեղծման համար:

Ստացվել է 25.10.2016

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Վալեսյան Լ.** Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքներ: Եր., 2004:
2. **Баранский Н.Н.** Становление советской экономический географии. М., 1980.
3. **Колосовский Н.Н.** Теория экономического районирования. М., 1969.
4. **Голубчик М.М., Евдокимов С.П.** География. М.: Аспект Пресс, 2003, 304 с.
5. **Анучин В.А.** Географический фактор в развитии общества. М., 1982.

6. **Саушкин Ю.Г.** Географическая наука в прошлом, настоящем и будущим. М., 1980.
7. **Мескон М., Альберт М., Хедоури Ф.** Основы меджмента. М.: Дело, 1999, 376 с.
8. **Харвей Д.** Научные объяснения в географии. М., 1974.
9. **Ավագյան Ա.Ռ.** Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատումը: Եր., 2000:
10. Մենեջմենթ (Յու. Սուվարյանի խմբագրությամբ): Եր., 2009:
11. **Бразлин У.** Менеджмент. М.: ИНФРА, 1997, 376 с.
12. **Միրզոյան Վ.** Աշխատանքի պրոբլեմը արևմտյան սոցիոլոգիայում: Եր.: ՀՍԽՀ ԳԱ հրատ., 1990, 140 էջ:
13. **Шоул Дж.** Первокласный сервис. М., 2008.

А. Р. АВАГЯН

РОЛЬ ПОТРЕБНОСТЕЙ И МОТИВАЦИИ В ДЕЛЕ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ОРГАНИЗАЦИИ ОБЩЕСТВЕННОЙ ЖИЗНИ

Резюме

Потребности и мотивация человека находятся в диалектической взаимосвязи. Это единство создает условия для развития общественной жизни, что, в свою очередь, способствует целенаправленному использованию природных и человеческих ресурсов региона, а также устойчивому развитию общества.

A. R. AVAGIAN

ROLE OF NEEDS AND REASONS FOR TERRITORIAL ORGANIZATION OF SOCIAL LIFE

Summary

Service sphere has its main role in the organization of social life. Due to it, human gets satisfaction for his or her needs. And for organization of such system, it is important to explore and estimate its scientific mechanism. So, it gives opportunity to estimate social life and needs cooperation.